**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ**
**ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԳՀԱՊՁԲ-21-9/20-2**

ք. Երևան

05 -ը օգոստոսի 2021թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս **ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ՝ Ն. Յոլչյանի**, ով գործում է է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ **«Գնորդ»,** մի կողմից, և **«Ար-Մեդիկա» ՍՊԸ-ն**, ի դեմս տնօրեն **Ա. Սադոյանի**, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ **«Վաճառող»** մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.1.9 Ապրանքների ընդունման գործընթացն իրականացնել ՀՀ պաշտպանության նախարարի 22.02.2019թ. N 177 հրամանի պահանջների համաձայն (հրամանը հրապարակված է http://mil.am կայքի «Գրադարան» բաժնի «ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐ» ենթաբաժնում):

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է ***36,006,200 (երեսունվեց միլիոն վեց հազար երկու հարյուր) ՀՀ դրամ:*** Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և եռամսյակների: Վճարումն իրականացվում է հանձման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո ***15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 10.12.2021թ.:***

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **հինգ** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական

մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող

օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 12 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.16 Սույն պայմանագրի շրջանակներում պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչությունը**:

## 9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| **ԳՆՈՐԴ** | **ՎԱՃԱՌՈՂ** |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «Ար-Մեդիկա» ՍՊԸ |
| ք. Երևան Բագրևանդի 5 | ք.Երևան,Լենինգրադյան 23/11,92տ. |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «Ինեկոբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011144129 | Հ/Հ 2050022415161001 |
| ՀՎՀՀ 02522157 | ՀՎՀՀ 01268548 |
| ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ | տնօրեն |
| Ն. ՅՈԼՉՅԱՆ | Լ. ՍԱԴՈՅԱՆ |

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

| Հ/Հ | Ապրանքի անվանում | Տեխնիկական բնութագիր | Ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | արտադրողի անվանումը |
|---|---|---|---|---|---|
| 2 | Բազմառանցքային (տրանսպեդիկուլյար) պտուտակ 6 X 40 մմ | Ti-6Al-4V–համաձուլածքից պատրաստված իմպլանտներ, նախատեսված Expedium գործիքների հավաքածույով տեղադրման համար | Բազմառանցքային (տրանսպեդիկուլյար) պտուտակ 6 X 40 մմ | DePuy Synthes Spine | Johnson & Johnson/ MedosInternation al SarL/Depuy |
| 3 | Բազմառանցքային (տրանսպեդիկուլյար) պտուտակ 5 X 40 մմ | Ti-6Al-4V–համաձուլածքից պատրաստված իմպլանտներ, նախատեսված Expedium գործիքների հավաքածույով տեղադրման համար | Բազմառանցքային (տրանսպեդիկուլյար) պտուտակ 5 X 40 մմ | DePuy Synthes Spine | Johnson & Johnson/ MedosInternation al SarL/Depuy |
| 4 | Բազմառանցքային (տրանսպեդիկուլյար) պտուտակ 5 X 45 մմ | Ti-6Al-4 –համաձուլածքից պատրաստված իմպլանտներ, նախատեսված Expedium գործիքների հավաքածույով տեղադրման համար | Բազմառանցքային (տրանսպեդիկուլյար) պտուտակ 5 X 45 մմ | DePuy Synthes Spine | Johnson & Johnson/ MedosInternation al SarL/Depuy |
| 5 | Բազմառանցքային (տրանսպեդիկուլյար) պտուտակ 6 X 45 մմ | Ti-6Al-4–համաձուլածքից պատրաստված իմպլանտներ, նախատեսված Expedium գործիքների հավաքածույով տեղադրման համար | Բազմառանցքային (տրանսպեդիկուլյար) պտուտակ 6 X 45 մմ | DePuy Synthes Spine | Johnson & Johnson/ MedosInternation al SarL/Depuy |
| 6 | Բազմառանցքային (տրանսպեդիկուլյար) պտուտակ 6 X 50 մմ | Ti-6Al-4 –համաձուլածքից պատրաստված իմպլանտներ, նախատեսված Expedium գործիքների հավաքածույով տեղադրման համար | Բազմառանցքային (տրանսպեդիկուլյար) պտուտակ 6 X 50 մմ | DePuy Synthes Spine | Johnson & Johnson/ MedosInternation al SarL/Depuy |
| 7 | Ձող՝ Տրամագիծը՝ 5.5մմ, երկարությունը՝ 480մմ | Ti-6Al-4V–համաձուլածքից պատրաստված իմպլանտներ, նախատեսված Expedium գործիքների հավաքածույով տեղադրման համար | Ձող՝ Տրամագիծը՝ 5.5մմ, երկարությունը՝ 480մմ | DePuy Synthes Spine | Johnson & Johnson/ MedosInternation al SarL/Depuy |
| 8 | Միաբաղադրիչ ցածր պրոֆիլային ներքին պնդօղակ | Ti-6Al-4V–համաձուլածքից պատրաստված իմպլանտներ, նախատեսված Expedium գործիքների հավաքածույով տեղադրման համար | Միաբաղադրիչ ցածր պրոֆիլային ներքին պնդօղակ | DePuy Synthes Spine | Johnson & Johnson/ MedosInternation al SarL/Depuy |
| 9 | Ուղղահայաց կցորդիչ | Ti-6Al-4V–համաձուլածքից պատրաստված իմպլանտներ, նախատեսված Expedium գործիքների հավաքածույով տեղադրման համար | Ուղղահայաց կցորդիչ | DePuy Synthes Spine | Johnson & Johnson/ DePuy Spine Inc |
| 10 | Կիֆոպլաստիկայի համար նախատեսված բարձր խտության ցեմենտ, խառնման և ներարկման հիդրավլիկ համակարգով | Կիֆոպլաստիկայի, վերտեբրոպլաստիկայի համար նախատեսված բարձր խտության ցեմենտ՝ իրեն խառնող և տեղ հասցնող համակարգով, մեկ հավաքածույում: Բարձր խտության ոսկրային ցեմենտը կազմված է 20 գրամ փոշի բաղադրամասից, կազմված՝ մեթիլմետակրիլատից 18, 5%, մեթիլակրիլատի եւ մեթիլմետակրիլատի սոպոլիմերից 51,0 %, բենզոիլի պերոկսիդից 0,6 %, բարիումի սուլֆատից 29,9% նախատեսված է օստեոպորոզների, ուռուցքների, տրավմաների հետևանքով առաջացած կոմպրեսիոն կոտրվածքների բուժման համար: Հեղուկ կոմպոնենտը 97,5% կազմված է մեթիլմետակրիլատից: Ներարկման ժամանակը 9 րոպե՝ վիրահատարանի 20 աստիճան ցելսիուսի դեպքում: Ցեմենտի ծավալը 11,0 մլ: Վիրահատական տեխնիկան հարմարեցված է խառնումից անմիջապես հետո ներկարկում կատարելուն, առավելագույն չափով կրճատելով միջամտության ժամանակը: Խառնման համակարգը իրենից ներկայացնում է պլաստիկե թաս՝ | Կիֆոպլաստիկայի համար նախատեսված բարձր խտության ցեմենտ, խառնման և ներարկման հիդրավլիկ համակարգով | DePuy Synthes Spine | Johnson & Johnson/ Medos International SarL/Depuy Spine |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | իր կափարիչով, որի վրա տեղադրված է պտտման բռնակը դրսի կողմից և երկու գլանակներ ներսի կողմից, որոնք ծառայում են ցեմենտի խառնմանը: Ցեմենտի ներարկման հիդրավլիկ համակարգը կազմված է պլաստիկե պոմպից, ստերիլ հեղուկով ներսում , ճնշում առաջացնող մխոցով և էրգոնոմիկ բռնակով, որը թույլ է տալիս դուրս մղել պոմպից 0,3մմ ջուր՝ մեկ պտույտի դեպքում, երկրորդը՝ թափանցիկ տարրա, ցեմենտի համար, որի ներսում առկա է մխոց՝ պլաստիկե կափարիչով: Տարան ունի աստիճանասանդղակ 0-10մմ՝ 1մլ քայլով: Երկու սարքերը իրար են միանում ճկուն խողովակով: Հավաքում առկա է ողի մարմնի մեջ ասեղների մտցման համար նախատեսված մուրճ՝ 150գր, պլաստիկե պոչով՝ 278մմ երկարությամբ: Պլաստիկե ասեղբռնիչ՝ ասեղի ամրացման համար կցորդիչով: Երկու հատ 13G 100մմ ից ոչ պակաս երկարությամբ քառանկյուն ծայրով ուղեկցող ասեղներ: Մեկ հատ բիոպսիոն ասեղ 15G՝ երկարությունը 230մմ: | | | |
| 11 | VAPR 3 համակարգի համար նախատեսված էլեկտրոդ 3.5մմ.(ծայրադիր) | Էլեկտրոդը երկբևեռ է, ունի ինտեգրված բռնակ, միանում է գեներատորին լարի միջոցով: Էլեկտրոդը հեղուկում իոնների վրա ռադիոհաճախային ազդեցության միջոցով առաջացնում է վապորիզացիոն գրպան: Վապորիզացիոն գրպանը փոքրացնում է հյուսվածքների ծավալը, առաջացնելով < 65°C ջերմաստիճանով: Էլեկտրոդի աշխատանքային մակերես՝ կեռի տիպի է, տրամագիծը 3,5մմ: Միացնող ձողի երկարությունը140մմ | VAPR 3 համակարգի համար նախատեսված էլեկտրոդ 3.5մմ.(ծայրադիր) | DePuy Synthes Mitek | Johnson & Johnson /DePuy Mitek / |
| 12 | VAPR 3 համակարգի համար նախատեսված4.0մմ տրամագծով ներքաշող էլեկտրոդ բռնակով (ծայրադիր): | Էլեկտրոդը բիպոլյար է, ունի եռկոնտակտային կցորդիչ բլոկ՝ բռնակին միացնող ձողը և ծայրադիրը գեներատորին միացնելու համար: Էլեկտրոդը լուծույթի իոնների վրա ունենում է ռադիոհաճախային ազդեցություն, առաջացնելով վապորիզացիոն գրպան: Վապորիզացիոն գրպանը ներգործում է հյուսվածքների վրա < 65°C ջերմաստիճանով, փոքրացնելով նրանց ծավալը: Էլեկտրոդը ունի 90 աստիճան անկյան տակ գտնվող 4.0 մմ կողային աշխատանքային մակերես, որը առավելագույնի է հասցնում հյուսվածքների հետ հետադարձ կապը և կհեշտացնի դժվար հասանելի հյուսվածքների հեռացումը: Անհատական ներկառուցված արտածծող խողովակը թույլ է տալիս հեռացնել պղպջակները և վապորիզացիայի արգասիքները: Կոնստրուկցիան ապահովում ասպիրացիան՝ ուղին, դժվար հասանելի և ճյուղավորված հյուսվածքների հետ աշխատելիս և նվազագույնի հասցնի խցանումները: Միացնող ձողի երկարությունը 160մմ | VAPR 3 համակարգի համար նախատեսված4.0մմ տրամագծով ներքաշող էլեկտրոդ բռնակով (ծայրադիր): | DePuy Synthes Mitek | Johnson & Johnson /DePuy Mitek / |
| 16 | Ներմղող և մեկ փականային մուտքով հեռացնող ոռոգման խողովակների հավաք նախատեսված կլինիկայում առկաարթրոսկոպիկ ոռոգման FMS vue համակարգի համար | Ներմղող խողովակների հավաք նախատեսված գլանային ներմղող և արտամղող մեխանիզմով աշխատող շեյվերին ինտեգրված համակարգի համար: Ներառում է ներմղող խողովակ ճնշման խցիկով, միացման համար նախատեսված պլաստիկե մեխանիզմներով, ստերիլ, տուփում 24 հատ: Նյութերը, որից պատրաստված են խողովակները չի պարունակում Դի 2-էթիլհեքսիլ ֆտալատ: -1տուփ: Ոռոգման հեղուկը հեռացնող, անցումային, մեկ փականային մուտքով, խողովակներ նախատեսված ինտեգրված արթրոսկոպիկ պոմպի հետ աշխատանքի համար, ստերի, տուփում 24 հատ: Նյութերը, որից պատրաստված են խողովակները չեն պարունակում Դի 2-էթիլհեքսիլ ֆտալատ-1 տուփ: | Ներմղող և մեկ փականային մուտքով հեռացնող ոռոգման խողովակների հավաք նախատեսված կլինիկայում առկաարթրոսկոպիկ ոռոգման FMS vue համակարգի համար | DePuy Synthes Mitek | Johnson & Johnson /DePuy Mitek / |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 17 | Ներհոդային վիրահատություններ համար նախատեսված կլինիկայում առկա կանյուլաների հավաքի լրացում | 1)Ակոսավոր կանյուլա 7.0X75մմ: Կանյուլան թափանցիկ է, ակոսով, որը կկանխի հոդի խոռոչից դուրս գալուն վիրահատության ընթացքում: Տրամագիծը 7.0մմ, երկարությունը 75մմ: Նախատեսված ուսահոդի արթրոսկոպիկ վիրահատությունների համար (Պտտվող թեզանիքի վնասվածքներ, SLAP, Bankart): Յուրաքանչյուր կոնյուլա ստերիլ է, առանձին փաթեթավորված: Տուփում 5 հատ2 տուփ: 2). Ողորկ կանյուլա 7.0X75մմ: Կանյուլան թափանցիկ է, ողորկ, տրամագիծը 7.0մմ, երկարությունը 75մմ: Նախատեսված ուսահոդի արթրոսկոպիկ վիրահատությունների համար(Պտտվող թեզանիքի վնասվածքներ, SLAP, Bankart): Յուրաքանչյուր կոնյուլա ստերիլ է առանձին փաթեթավորված: Տուփում 5 հատ2 տուփ: 3)Սուր դիստալ ծայրով ողորկ կոնյուլա 5.5X75մմ: Կանյուլան թափանցիկ է, ողորկ, տրամագիծը 5.5 մմ, երկարությունը 75մմ, ծայրը սուր: Նախատեսված ուսահոդի արթրոսկոպիկ վիրահատությունների համար (Պտտվող թեզանիքի վնասվածքներ, SLAP, Bankart): Յուրաքանչյուր կոնյուլա ստերիլ է,առանձին փաթեթավորված իր օբտուրատորի հետ: Տուփում 5 հատ1 տուփ: 4) Ակոսավոր կանյուլա 8.5 X75մմ: Կանյուլան թափանցիկ է, ակոսով, որը կկանխի հոդի խոռոչից դուրս գալուն վիրահատության ընթացքում: Տրամագիծը 8.5մմ, երկարությունը 75մմ: Նախատեսված ուսահոդի արթրոսկոպիկ վիրահատությունների համար (Պտտվող թեզանիքի վնասվածքներ, SLAP, Bankart): Յուրաքանչյուր կոնյուլա ստերիլ է, առանձին փաթեթավորված: Տուփում 5 հատ-2 տուփ | Ներհոդային վիրահատություններ համար նախատեսված կլինիկայում առկա կանյուլաների հավաքի լրացում | DePuy Synthes Mitek | Johnson & Johnson /DePuy Mitek / |

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Ար-Մեդիկա» ՍՊԸ
տնօրեն

Ա. ՍԱԴՈՅԱՆ

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Գնման առարկայի | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| չ/հ | անվանումը | չ/մ | քանակը | միավորի գինը (ՀՀ դրամ) | ընդհանուր գումարը (ՀՀ դրամ) | մատակարարումը՝ 2021թ 3-րդ եռամսյակ |
| 2. | Բազմառանցքային (տրանսպեդիկուլյար) պտուտակ 6 X 40 մմ | հատ | 5 | 111,000 | 555,000 | 5 |
| 3. | Բազմառանցքային (տրանսպեդիկուլյար) պտուտակ 5 X 40 մմ | հատ | 5 | 111,000 | 555,000 | 5 |
| 4. | Բազմառանցքային (տրանսպեդիկուլյար) պտուտակ 5 X 45 մմ | հատ | 15 | 111,000 | 1,665,000 | 15 |
| 5. | Բազմառանցքային (տրանսպեդիկուլյար) պտուտակ 6 X 45 մմ | հատ | 16 | 111,000 | 1,776,000 | 16 |
| 6. | Բազմառանցքային (տրանսպեդիկուլյար) պտուտակ 6 X 50 մմ | հատ | 16 | 111,000 | 1,776,000 | 16 |
| 7. | Ձող՝ Տրամագիծը՝ 5.5մմ, երկարությունը՝ 480մմ | հատ | 10 | 139,000 | 1,390,000 | 10 |
| 8. | Միաբաղադրիչ ցածր պրոֆիլային ներքին պնդօղակ | հատ | 86 | 37,800 | 3,250,800 | 86 |
| 9. | Ուղղահայաց կցորդիչ | հատ | 10 | 150,000 | 1,500,000 | 10 |
| 10. | Կիֆոպլաստիկայի համար նախատեսված բարձր խտության ցեմենտ, խառնման և ներարկման հիդրավլիկ համակարգով | լրակազմ | 12 | 1,101,950 | 13,223,400 | 12 |
| 11. | VAPR 3 համակարգի համար նախատեսված էլեկտրոդ 3.5մմ.(ծայրադիր) | հատ | 15 | 133,000 | 1,995,000 | 15 |
| 12. | VAPR 3 համակարգի համար նախատեսված 4.0մմ տրամագծով ներքաշող էլեկտրոդ բռնակով (ծայրադիր): | հատ | 15 | 160,000 | 2,400,000 | 15 |
| 16. | Ներմղող և մեկ փականային մուտքով հեռացնող ոռոգման խողովակների հավաք նախատեսված կլինիկայում առկա արթրոսկոպիկ ոռոգման FMS vue համակարգի համար | լրակազմ | 3 | 1,680,000 | 5,040,000 | 3 |
| 17. | Ներհոդային վիրահատություններ համար նախատեսված կլինիկայում առկա կանյուլաների հավաքի լրացում | լրակազմ | 1 | 880,000 | 880,000 | 1 |
| **Ընդամենը** | | | | | **36,006,200** | |

**Ծանոթություն**

**Ապրանքները պետք է ունենան.**

1.Եվրամիության և/կամ ԵԱՏՄ երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/ կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (CE Mark կամ այլ): Բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները:

2. Արտադրողի միջազգային հավաստագրի /ISO, GMP կամ այլ/ և /կամ/ արտադրող պետության կողմից տրված արտադրության անվտանգության և որակի վերահսկման հավաստագրի պատճեն:

**3. Արտադրող կազմակերպության (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի) կողմից տվյալ ապրանքի համար տրված երաշխիքային նամակ՝ պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին համապատասխանության հավաստմամբ, ռուսերեն կամ անգլերեն լեզուներով (այլ լեզուներով տրված երաշխիքային նամակի դեպքում՝ ներկայացնել նաև դրա նոտարական վավերացմամբ հայերեն թարգմանությունը):**

4.Պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների դեպքում՝ապրանքատեսակները հանձնման պահին պետք է ունենան առնվազն պիտանելիության ժամկետի 1/2-ը:

5.Մատակարարման վայր՝ **ք. Աբովյան, Արզնու խճուղի՝ կենտրոնական բժշկական բազա:**

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Ար-Մեդիկա» ՍՊԸ
տնօրեն

Ա. ՍԱԴՈՅԱՆ

*Հավելված N 2*
*N ԳՀԱՊՁԲ-21-9/20-2 պայմանագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Գնման առարկայի | | | | |
|---|---|---|---|---|
| չ/հ | CPV և ապրանքի անվանումները | CPV կոդը | Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ պետական բյուջեի 2021թ. հատկացումների հաշվին, ըստ եռամսյակների, բայց ոչ ուշ, քան 10.12.2021թ., ընդ որում՝ | |
| | | | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ |
| 2. | **Վիրաբուժական գործիքներ**/Բազմառանցքային (տրանսպեդիկուլյար) պտուտակ 6 X 40 մմ | 33161120/28 | 555,000 | 555,000 |
| 3. | **Վիրաբուժական գործիքներ**/Բազմառանցքային (տրանսպեդիկուլյար) պտուտակ 5 X 40 մմ | 33161120/29 | 555,000 | 555,000 |
| 4. | **Վիրաբուժական գործիքներ**/Բազմառանցքային (տրանսպեդիկուլյար) պտուտակ 5 X 45 մմ | 33161120/30 | 1,665,000 | 1,665,000 |
| 5. | **Վիրաբուժական գործիքներ**/Բազմառանցքային (տրանսպեդիկուլյար) պտուտակ 6 X 45 մմ | 33161120/31 | 1,776,000 | 1,776,000 |
| 6. | **Վիրաբուժական գործիքներ**/Բազմառանցքային (տրանսպեդիկուլյար) պտուտակ 6 X 50 մմ | 33161120/32 | 1,776,000 | 1,776,000 |
| 7. | **Վիրաբուժական գործիքներ**/Ձող՝ Տրամագիծը՝ 5.5մմ, երկարությունը՝ 480մմ | 33161120/33 | 1,390,000 | 1,390,000 |
| 8. | **Վիրաբուժական գործիքներ**/Միաբաղադրիչ ցածր պրոֆիլային ներքին պնդօղակ | 33161120/34 | 3,250,800 | 3,250,800 |
| 9. | **Վիրաբուժական գործիքներ**/Ուղղահայաց կցորդիչ | 33161120/35 | 1,500,000 | 1,500,000 |
| 10. | **Վիրաբուժական գործիքներ բազմակոմպոնենտ**/Կիֆոպլաստիկայի համար նախատեսված բարձր խտության ցեմենտ, խառնման և ներարկման հիդրավլիկ համակարգով | 33141224/11 | 13,223,400 | 13,223,400 |
| 11. | **Վիրաբուժական գործիքներ**/VAPR3 համակարգի համար նախատեսված էլեկտրոդ 3.5մմ.(ծայրադիր) | 33161120/36 | 1,995,000 | 1,995,000 |
| 12. | **Վիրաբուժական գործիքներ**/VAPR3 համակարգի համար նախատեսված 4.0մմ տրամագծով ներքաշող էլեկտրոդ բռնակով (ծայրադիր): | 33161120/37 | 2,400,000 | 2,400,000 |
| 16. | **Վիրաբուժական գործիքներ բազմակոմպոնենտ**/Ներմղող և մեկ փականային մուտքով հեռացնող ոռոգման խողովակների հավաք նախատեսված կլինիկայում առկա արթրոսկոպիկ ոռոգման FMS vue համակարգի համար | 33141224/17 | 5,040,000 | 5,040,000 |
| 17. | **Վիրաբուժական գործիքներ բազմակոմպոնենտ**/Ներհոդային վիրահատություններ համար նախատեսված կլինիկայում առկա կանյուլաների հավաքի լրացում | 33141224/18 | 880,000 | 880,000 |
| **Ընդամենը** | | | **36,006,200** | **36,006,200** |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Ար-Մեդիկա» ՍՊԸ
տնօրեն

Ա. ՍԱԴՈՅԱՆ

*Հավելված N 3*
*N ԳՀԱՊՁԲ-21-9/20-2 պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| _____ | _____ |
| _____ | _____ |
| գտնվելու վայրը _____ | գտնվելու վայրը _____ |
| հհ _____ | հհ_____ |
| հվհհ _____ | հվհհ_____ |

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

*«  » «  » 20  թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
_
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «  » «  » 20  թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ապրանքը հանձնեց | Ապրանքը ընդունեց |
|---|---|
| _____ | _____ |
| _____ | ստորագրություն |
| ազգանուն, անուն | _____ |
| | ազգանուն, անուն |
| | Կ.Տ. |

*Հավելված 3.1*
*N ԳՀԱՊՁԲ-21-9/20- 2 պայմանագրի*

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

_____
ազգանուն, անուն
_____
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն
_____
ստորագրություն